


ՏՆՈՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓՈՒՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէսք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80

» » վեցամսեայ » 50

Օտար երկիրներ տարեկան ֆրանկ 25

» » վեցամսեայ » 14

Թղթասարի ծախքը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Պանդուխտ երիտասարդ մը որ քաղաքիս
Եւրոպական հիւանդանոցներէ մէկին մէջ գալ-
մանուէրէ ետք դուրս ելած էր, կը պատմէր
մեզի թէ հոն հանգիպելու է ուրիշ հայու մը,
երեսի վրայ ձգուած՝ սրահին մէջ, որ մասնա-
ւոր խնամքներու կը կարօտի ապաքինելու հա-
մար. բժիշկը կուգայ կայցելէ, մայրապետը
գեղը կուտայ կերթայ, ու հիւանդին վիճակը
կը մնայ անփոփոխ. օտարական է, լեզու չի
գիտեր, իր վրայ մօտէն կարեկցող մը չունի :

Ուրիշ մը, ան ալ գաղթական, որ իր
ձեռարուեստով հացը կը ճարէր ու ծերունի
մօրն ալ կ'օգնէր մինչեւ Պոլիս, գիշեր մը ե-
լքարական թրամուէրին զոհ տուաւ մէկ ոտ-
քը որ ջախջախուեցաւ. վիրաբուժական ծանր
գործողութենէ մը ետք, որով հազիւ փրկուե-
ցաւ կեանքը, այդ խեղճն ալ դեռ պառկած
է չենք գիտեր ո՞ր հիւանդանոցին մէջ, սպա-
սելով որ ընկերութիւնը քառեկանի փայտէ
ոտք մը անցունել տալ իրեն :

Անցեալ ձմեռն սկիզբը, թոքախտաւոր
տղայ մը, գրչի վատակաւոր, Գահիրէ եկաւ
եգիպտական տաքուկ արեւին տակ քիչ մը
կազդուրուելու. գիտէր իր անողոք արտին
վճիւրը, բայց յուսաց գոնէ քանի մը տարի
երկարել կեանքն այստեղ. իր բարեկամներն
ամեն դուռ դարկին, բայց ոչ ոք կուգէր խուց
մը, անկողին մը տալ այդ գունատ ու հա-
զացող երիտասարդին որուն այտերուն վրայ
մեռելական դաւուկը կը նկարուէր արդէն.
վերջապէս ընդունուեցաւ գերմանական հի-
ւանդանոցին մէջ, ուր գթացին իր վրայ, տես-
նելով որ փողոցը պիտի մնար. Ամիսը չի բու-
լորած, գնաց հանգչիլ Մարմինայի գերեզ-
մանատան մէկ անկիւնը :

Քանի՜ հայեր կուգան կանցնին այսպէս
ամեն տարի՝ օտար բարձերու վրայ հանգչե-
ցունելով իրենց գլուխը. եթէ տեղական,
ֆրանսական կամ գերմանական հիւանդա-
նոցներն ալ չընդունէին զանոնք, ի՞նչ պիտի
ըլլար վիճակին. Այդ հաստատութիւններուն
բան մը ըսելու իրաւունք չունինք. կա՛մ մար-
դասիրաբար կամ շատ համեստ վճարման մը
փոխարէն կընծայեն ինչ որ տրամադրելի ու-
նին՝ դեղ, բժիշկ, անկողին. Բայց այս վեր-
ջին տարուան մէջ մանաւանդ պարզուած ար-
խուր տեսարանները կը թելադրեն մեզի մը-

տածելու թէ կարելի չէ՞ արդեօք որ եգիպ-
տոսի հայութիւնն ալ ունենար կամ ունենայ
գոնէ պղտիկ հիւանդանոց մը իր աղքատնե-
րուն ու պանդուխտներուն համար :

Պէտք է խոստովանինք որ Առաջնորդարան,
հոգաբարձութիւններ, յանձնաժողովներ, բա-
րեկրտ անհատներ ըրին ու կընեն ինչ որ կա-
րելի է, ներկայացած աղէտին դարման հաս-
ցունելով. գթութեան քոյրերուն կոչում ըրին,
հիւանդանոցի վարձքը վճարեցին, ձրի բժիշկ
հասուցին, դեղարան հաստատեցին. ասոնց
համար երախտագիտութենէ տարբեր զգա-
ցում չի կրնար արտայայտուիլ :

Սակայն հիմնաւոր ու տեւական ձեռնար-
կութեան մը պէտքը կայ ու կը մնայ միշտ.
Իզմիր ունի իր հիւանդանոցը, ինչո՞ւ եգիպ-
տոս ալ չունենայ. միթէ հոս Սպարթաքեան-
նե՞ր կը պակսին. Ռուսահայոց մէջ ամիս
չանցնիր որ մեծագումար կտակ մը երեւան
չի գայ. Նորագոյն կտակը, յիշե՛ք անցողա-
բար, վաճառական Գրիգոր Մեղվինեանինն է
որ 52,300 ռուպլի թողած է բարեգործական
հաստատութիւններու :

Եգիպտահայ մեծատուններուն ուշադրու-
թեան կը ներկայացունենք այս պարագաները
ու այս բաղձանքը որ ընդհանուր ժողովուր-
դինն է. Անոնք որ իրենց կենդանութեանը
ազգ. հիւանդանոցի մը հիմը դնեն այստեղ,
կամ իրենց կտակով այդ տեսակ կամք մը
յայտնեն, նոյնքան բարիք ըրած պիտի ըլլան
այս հայ գաղութին որքան դպրոցի կամ ե-
կեղեցիի բարերարները :

ՖԼԵՇԻ ԱՌԹԻԻ

(ԲԱՆՏԱՑԻՆ ՅԵՇԱՏԱԿ ՄԸ)

Փարոսի վերջին թիւի «Օտար Էջեր»-ուն մէջ
հետաքրքրութեամբ կարդացի քառասուններու թա-
գաւորին պատմութիւնը. Ֆրէտէրիք Ֆլէշի ձեռքի
ճարտիկութիւնը և ժամացոյց ու թղթապանակ չոր-
թելու վարժութիւնը ինծի կը յիշեցունեն անոր հետ
մրցելու կարող քառակահատ մը զոր երեք տարի ա-
ռաջ ճանչցայ Պոլիս, սակաւօրեայ բանտարկութեան
մը միջոցին. Տարբերութիւնը սա ըլլաւ է այս
երկու դէմքերուն միջեւ, որ եթէ առաջինն արհես-
տին պատիւը բարձր պահել կուգէր և Ռօջիլտներու
ու Բրէնս տը կաններու հետ գործ կուենար, երկ-
րորդը խտրութիւն դնել չէր գիտեր իր «յաճախորդ-
ներուն», միջեւ, ու ստորին տեսակէ բաականատ մըն
էր. Բայց ճարտար, որքան որ կրնար երեւակայել
Միջավայրն ալ, բնականաբար, իր աղքատութիւնն
ունեցած էր ասոնց նկարագրին վրայ. մէկը Լոնտոնի

թաղերուն մէջ կը գործէր, միւսը Ղալաթիոյ փողոց-
ներուն մէջ :

Այն թուականին ուր թուրքալարնակ ամեն հայ
— «հերոս», ըլլար կամ ոչ — պարտաւոր էր անգամ
մը անցնիլ ոստիկանութեան բովէն, ինչպէս այս
միջոցիս ամեն եգիպտացի ենթարկուած է «տանկ»-ի
համաճարակին, այս տողերը գործն ալ, որին մէկը
ինքզինքը յանկարծ փոխադրուած գտաւ իր գրասե-
նեակէն բանտի նախագաւիթը. Յունիսի իրիկուն մըն
էր, տար, ճնշող օդով մը որ կը սաստկացունէր
յուզմունքս ու այլայլումս. բանտապահը, կատար-
եալ blasé մը իր պաշտօնին մէջ զոր բառսուն տա-
րիէ ի վեր կը վարէ ելեր, չեմ գիտեր ի՞նչ զգա-
ցումէ զրդուած՝ զոր աւելի բուհանայր ենթադրեցի
քան բարեգործութիւն, զիս փոխանակ գետնայարկի
«խօսվուր նետելու» իր appartement-ը ցրել տուաւ
ուր պիտի սպասէի հարցաքննութեան կարգիս. այս
բացատրութիւնը կըլլար երկու դասակարգի ձերբա-
կալումներու համար. կա՛մ ամենէն «փոխադարձ»
ներուն, որպէսզի աչքի տակ պահուին կամ ամենէն
«անմեղներուն», առաջիններէն չէի, յայտնի էր.
Իսկ երկրորդ դասակարգին պատկանիլս կը խոստո-
վանիմ նոյն իսկ այսօր, ինքզինքիս réclame ընելու
ասանկ աղւոր առիթէ մը չուզելով օգտուիլ. Ու-
րիշներուն կը թողում այդ վայելքը :

Խուցը ուր առաջնորդուեցայ, փայտէ խարխուլ
սանդուխէ մը վեր ելելով, իրեւ միակ կարասի կը
պարունակէր կոտրած թիկնաթուռ մը ու բանտապա-
հին անկողինը, ծալուած, որ բազմոցի տեղ կը ծա-
ռայէր. գարշահոտ լամպար մը կիսով կը վառէր գե-
տինը, բարձի մը քով որուն տեսքը բաւական էր
ծարաւս անցունելու. Անբացատրելի զգայնութիւն
մը ունեցայ այդ վայրկենին. երազի մէջ կը կարծէի
ինքզինքս, անծանօթ աշխարհ մը տեղափոխուած.
մէկ ժամէն աւելի մնայի թիկնաթուռն վրայ,
ընկճուած, անգիտակից, գինովի պէս. Առանձնու-
թիւնը մանաւանդ կը ճնշէր զիս. և առաջին գէմքը
զոր տեսայ ու ձայնը զոր լսեցի՝ — թէեւ անծանօթ
ու օտար — բարերար ներգործութիւն ըրին վրաս.
Երկտասարդ մըն էր, «ապայէ», հագուստներով ու
բոպիկ ոտքերով, որ յուշիկ ներս մտաւ ու եկաւ.
Ծալլապատիկ նստիլ գետինը, թիկնաթուռի մօտ,
— «Իսկի՛ եկաք, եղբայրս», ըսելով թուրքերէնի Ռան-
տին մէջ ազգութիւն չիկայ, գիտէք. հաստարու-
թեան տեղն է հոն, ամենքը մէկ ընտանիքի անդամ :

Ահարկու դէմք մը չունէր այդ աղքատը որ քիչ
ետք իմացայ իր բերնէն թէ շարքի մը առաջ. . .
մարդ սպաննած էր. ինքը «փոխադարձներէն», ը-
լլուն հոգ դրած էին որպէսզի վարը, բազմութեան
մէջ, փորձանք մը չի հանէ. զո՞հի մը կերպարանքով
ու անմեղի մը շեշտով կը խօսէր հետս, սիրտ տա-
լով ինծի թէ վախու բան չի կայ բանտային կեանքի
մէջ. տակաւ առ տակաւ գաղափար կազմեցի սա.
Կայն թէ վախին մարմնաւորումը ինքն իսկ էր. նշա-
նաւոր չարագործ ու նշանաւոր քառակահատ. վերջին
անգամ կնոջ խնդրի մը համար, փողոցին մէջ տեղ
տղայ մը մեռուցած ու բռնուած էր. բայց անխուով
կը մնար, բացատրելով ինծի իր ապագայի ծրագիր-
ները, երբ — դատապարտութեան պարագային մէջ —
տասնըմեկ տարի ետքը. . . նորէն աշխարհի մտնէր.
Պարտաւորուած էի մտիկ ընել զինքը, առանց զգա-
ցունել տալու ինծի պատճառած սոսկումը ու պըժ.

գանձերը Գիշերը կը յառաջանար, և ես տրիւն քը-
տինք կը թափէի. լաւտապահը եկաւ վերջապէս
հանգստանալու և մեզի արտօնեց հրթիւ քովի
սրահը, նոյնպէս լաւտապահներու յառաջիկայ
երկու երեք հոգի կային: Հոն համեմատարար
պաշտօն, էինք, բաւական էր որ չի խանգարէինք
մեր խոստովանելով զրապիւն քունը. ո՛հ, այդ կողմէն
կրնար հանգիստ ըլլալ. որքանո՞ւս վրայ սիրտ կար
բարձր խօսելու, խնդալու:

Այն ատեն, մարդաստան-բաւականաւոր սկսաւ
սկսեալ մեզի պատմութիւններ իր արկածալից
կեանքէն, կատարեալ մասնագիտութեամբ կը խոս-
տովանէր որ, տխուր, անտույգ կայութիւնս պահ
մը մոռնալով, սկսայ համ ասնել իր մանրամասնութիւն
որոնք տեսնելի գրեթէ երեք գիշեր. զարու մը
չափ երկար երեւցող այդ կարճ ժամանակամիջոցին
մէջ, գիտցաւ վառ պահել մեր հետաքրքրութիւնը:
Ճշմարիտ դասախօսութիւն մը, COURTS մըն էր զոր
կընէր մեզի արհեստին գաղտնիքներուն վրայ որոնք
մէկէ աւելի չափեալ կողմեր ունին եղբոր ճիշդ էր
Ֆլէշի պատմութիւնը զոր գրած էիք. բաւականաւոր
ձեռքի շուտութեան պիտի միայնակ աչքի նշանա-
ւոր դատողութիւն, կամ եթէ բուն լաւը կուզէք,
«Հոտառութիւն», Պիտի դուշակէ թէ հագուած սքը-
ուած պարոնք որ կը յառաջանայ մայրին վրայէն՝
անկուտի սիրահարին մէկն է, իսկ ուրիշ մը որ մա-
շած բալթիցի մը մէջ պլլուած կը բալէ տարտամ
բայերով, magot ունի ու թանկագին ժամացոյց մը:
Հետաքրքրութիւնս այնքան տառաջ տարի, որ առա-
ջարկեցի իրեն՝ փորձ մը ընել իմ վրաս, ժամացոյցս
ու գրաւանիս դրամը շորթելու. որքան միամիտ եմ
եղեր. կերելի թէ իր ուզածն ալ այդ էր, կատա-
րեալապէս յաջողեցաւ: Իմ բոլոր նախապատրաստու-
թեամբս, չի գգայի թէ ինչպէ՞ս «թուցուց», յետոյ
ամենայն պարկեշտութեամբ, ինծի վերադարձուց
ամեն բան:

Օ՛հ, այդ երկար, անընդհատ գիշերները չի պիտի
մոռնամ բնաւ. վարէն, գետնայարկէն կը լսէի խառն
ի խառն երգեցողութիւն մը խեղճ մարդիկներու
որոնցմէ շատերն, ինծի ալս անգիտակից իրենց ճա-
կատագրին, երաժշտութեան մէջ սփոխանք կը փնտ-
ռէին. թաւորիկի երգին կը յաջորդէր Տէր Ողոր-
մեան, ու թուրքերէն երգի մը՝ Ճօրճի Ճօրճին. հայը,
յոյնը, տաճիկը խառն ի խառն զիգուած էին հոն,
զիրար հրձուկելով, իրարմէ յոյս մը փնտռելով,
իրենց փրկութեան սպասելով: Յանկարծ, երկաթեայ
դրան ճանչնալը կընդհատէր ձայները, ու բիրտ գո-
չում մը արձագանգ կուտար բանտին խոյ կամար-
ներուի տակ. «Պուրապի Գրիգոր», կամ «Թէթի-
տաղցի Ուէ՛մի», Քաւկասաւոր, բնադրաբար կընդ-
հատէր իր պատմութիւնը, խօսքը ինծի ուղղելով.
—Մի՛ վախճար. եղբայրս, կըսէր, կարգը մե-
զի պիտի գայ. հիմակ ալ դուն կը կանչուիս հար-
ցաքննութեան:

Ճակատագիրս այլապէս տնօրինած էր սակայն:
Պատրիարքական միջամտութիւն մը, բարեգէտ վայր-
կենին հասած, եկաւ փրկել զիս, առանց դատա-
ւորի մը առջեւ հանելու: Ամբողջ շաբաթ առաւոտ
մըն էր. ձեռքներէն ձեռքուած կըր խրամատէն —զոր
պատուհան կը կոչեն— լուսաշող արեւու ճառագայթ
մը ներս թափանցելով, զգացունել կուտար ինծի
թէ դուրս ելանք ու երջանկութիւն կայ. թաղուած
էի մեկամայրութեան մը մէջ զոր Եգիպտոսի հաշիւն
իսկ չի կրնար ընծայել ամենէն զգայուն արարին.
ա՛լ ձանձրացած էի բաւականաւորութեան նկարագ-
րութիւններէն ու բանտակիցներուս վառ խօսակցու-
թեան. թմրած, կիսամեռ ինկած էի աթոռիս վրայ,
երբ յանկարծ, սանդուխտի տակէն, ձայն մը անու-
նըս որտայ:

Մեքենաբար սկսայ կռիւներս ոտքս անցունել,
հարցաքննութեան երթալու պատրաստուելով. խառ-
ուեր եմ եղեր. անտկնկալներու ամենէն հաճելին կը
սպասէր ինծի. բանտապանը նորէն կրկնեց անունս
ու աւելցուց, այս անգամ գառնացած շեշտով մը
«Ազատուեցա՛ր», Այդ սկեպտիկին, յափրացածին
գործին չէր գոր բանտարկեալի մը արձակումը, վասն
զի հասցիւթի աղբիւր մը կը պակսէր իրմէ. լայց սկա-
մայ կը հնազանդէր վերէն տրուած հրամանին:

Խղճուելու մօտ ելող մարդու մը ալս որ փըր-
կութեան լատտ մը կը գտնէ, վայրկեանապէս պատրաս-
տուեցայ ու հրաժեշտ առի «ընկերներէս», չի մոռ-
նալով դրամական նուէր մը տալ. բաւականաւոր-
դասպանին որ այնքան անզգալի դարձուցած էր իմ
օրերս ու գիշերներս Ժպտուն զէմքով մը մօտեցաւ
ինծի ու բարի աղաչում մաղթեց:

Դուրսը, փողպին մէջ, ուր քայլերս կը տատա-
նէին, իրր թէ հաստատ գետնի վրայ կ'իջնուէր դեռ չի
հաստայի, ուղեցի գիտնալ թէ ժամը քանի՞ն է. ժա-
մացոյցիս ու դրամիս հետքը չէր մնացած. տնայա-
տացեր էին:

Իսկայն անդրադարձայ. քաղաքացիութիւնս որ փորձ մը
ըրած էր գրաւան թեթեւեղեղու, այդ փորձը իրա-
կանութեան վերածեալ էր մեկնած վայրկեանիս: Ու
յիշեցի որ, իրաւ ալ, սանդուխտի գլուխը, զգացել
էի նոյն այն հպուղ ու թեթեւ. ցնցուղ զոր տուած
էր ինծի պատմութիւնս, ստի՛ր գիշերը, երբ մեզ
կը գտարձայունէր իր խաղերով ու վարձերով: Չէր
արժէր որ ետ դառնայիս կրնայի մօրթս վրայ տուած
ըլլալ լաւտիւն մէջ. ժամացոյցս ու քիչ մը դրամ վրայ
տուած թղալով նորէն տեսն ազատած էի:

Պատմութիւն, 2 նոյեմբեր 1897

ՏԱՐԱԳԻՐ

Ա Յ Ժ Մ Ե Ո Ւ Թ Ի Ի Ն

Լորս Պիքրնաճիլի մահէն ի վեր առա-
ջին անգամ ընդառնող կը ծեսնուի վիպասան
-նախարարապետ մը: Պ. Վրասսան Եօրկէվիլի,
Սերպիոյ նոր նախարարապետը, դիւանագի-
տական ասպարեզն ընդգրկելէ առաջ, թիշկ
եղած է ու միեւնոյն ժամանակ գրագէտ.
միեւնոյն իսկ վիպադեր կան թէ իր հրատա-
րակած հատորները, պատմական երկասիրու-
թիւններ ու վեպեր, Տիգրայէլի վիպասա-
նորթներէն աւելի կարժեռ: Քաղաքական-
նորթեան մէջ ալ պիտի ունենա՞յ նոյն յա-
ջողութիւնը, —ամեն համեմատութիւն պահե-
լով անշուշտ Անգլիոյ մեծնորթեան ու Սեր-
պիոյ պզտիկութեան միջեւ:

Սա ստոյգ է որ Պոլսոյ սերպիական
դեսպանին անակնկալ կերպով նախարա-
րապետի պաշտօնի կոչուիլը ուշագրւու դեպք
մը եղաւ Եւրոպայի համար: Պ. Եօրկէվիլ
Սերպիոյ նախորդ վեհապետին, Միլան քա-
ղաւորին անձնական թիշկին ու անձնուէրն
եղած է, անոր շնորհիւ առաջացած: Կառա-
վարութեան դէպք իր ձեռքն անցնելը տարա-
կոյս չի թողուր որ Միլան քաղաւորը նորէն
քաղաքական քեմիկ ետիւ կը կանգնի, գե-
րակշիռ աղքատութիւն քանակեցնելով իր գաւ-
կին՝ Աղեքսանդր քաղաւորին վրայ, եւ ա-
նուշակի կերպով ինք վարել ուղեղով երկ-
րին գործերը: Նախորդ նախարարութիւնը,
որուն գլուխ կը գտնուէր Պ. Սիւրի, Ռուսիոյ
կուսակից էր. նորը՝ Աւստրիոյ կողմը կը յա-
րի: Այս կերպով, Սերպիոյ աւստրիական քաղա-
քականութիւնն հիմնական փոփոխում մը
կը կրէ:

Միլան քաղաւորը որ իր գաւկին հետ
Պեչկուս վերադարձաւ այս անգամ, Պ. Սի-
ւիլի դահլիճը տապալելով հիւն վրէժ մը լու-
ծել կուզէ անկից: Քաղաքական ծեսակցում
կամքաստանէ գայն թէ պէտք եղածէն աւելի
կը հնազանդի Բեդրայութիւն եկած ներշնչ-
յուններու եւ Քաւասայի ու Պուրկարիոյ
կողմը կը յարի. իսկ ընտանեկան շրջանակի
մէջ՝ աւելի սաստիկ ֆէն ունի անոր դէմ:
Պատճառը... անուանական խնդիր մըն է:
Պ. Սիւրի Նաքալի քաղաքիին հաւանու-
թեամբ՝ հետաւորս եղած էր Սերպիոյ երի-
տասարդ վեհապետ անուանացունէր Քաւա-
սայի իշխանին աղջիկներէն մեկուն հետ,
եւ այս նպատակով համոզեց Աղեքսանդր
քաղաւորը այցելութիւն մը տալ Չեթինի
արմուկիին: Հայրը քունը կերպով կընդդի-

մանաւ այս խորհուրդներուն. եւ սակայն,
այցելութիւնը տեղի ունեցաւ. միայն թէ,
չի գիտցուի ինչ պատճառաւ, նշանաւորի
խօսք չի դարձաւ քննա: Այդ քաղաքական ի-
շխուս Միլան քաղաւորը կատարի հակառա-
կորդ է Պ. Սիւրիի:

Այս պայմաններուն մէջ տեղի ունեցած
փոփոխում մը քննական է որ հանդիս է չի
պիտի թողու Սերպիան եւ հրատապ պայմա-
ններու դռն պիտի բանայ:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պալէն անգլիական Տէյլի Մէյլ լրագ-
րին ուղղուած հեռագիր մը կը հաղորդէ թէ
Դուռը կը պնդէ ամերիկեան կառավարութեան
մօտ որդէպի ետ կանչուին երկու միսիոնար-
ներ որոնք նպատակ բաշխում կը կատարեն
Հալէպի նահանգին մէջ:

Ամերիկեան կառավարութիւնը տրամա-
դիր չէ այս խնդրանքին համակերպելու, հա-
մադրուած ըլլալով որ Դուռը որոշած է Թուր-
քիայէն արտաքսել բոլոր միսիոնարները:

Ռուսմանիոյ ընդգրկմանը, կուսակցու-
թեան թերթերը կը քննադատեն Պ. Սեր-
պիոյ նախարարութեան ձեռք առած միջոց-
ներն հայերուն նկատմամբ, ինչ որ արդեւ
չէ եղած սակայն որ այդ խտտութիւններ չի
չարմանակուին: Վերջին անգամ, Բէօսթէնէի
կառավարիչը կասկածելով երկու հայերու վը-
րայ, անգլիագրքեր է ներքին գործոց նախա-
րարին որմէ եկած հրահանգին համաձայն՝
զանոնք փոքր շոգենաւով մը Սուլինա զրկել
է և անկից գուրս հանուել են ռուսմանական
հողէն:

—Հոկտեմբեր 6/18ի երկուշաբթի ա-
ռաւօտուն պուրկարական շոգենաւով մը եր-
կու հարկերի մօտ հայ գաղթականներ Վառ-
նայէ Պոլիս դարձեր են: Ասոնցմէ ինքնուր
հոգի շորեքշաբթի իրիկուն ելեր են շոգենա-
ւէն ու իրենց տունները գացեր են: Այս երեք-
օրեայ սպասման պատճառը «օրինական ձե-
ւակերպութեանց կատարումն է»: Երեսուն հո-
ւի դեռ կը մնան եղբր շոգենաւին մէջ մին-
չեւ ուրբաթ. հաւանաբար անոնք ալ արձակ-
ուած են մինչեւ այսօր: Ամեն պարագայի մէջ,
լաւագոյն է շոգենաւին մէջ սպասել քան բանտ
տարուիլ:

—Վերջին օրերս Կ. Պալէն Լոնտոնի թեր-
թերուն ուղղուած հեռագիրներ, որոնք կը ծա-
նուցանեն թէ Թուրքիա իր զօրքերը զէնքի
տակ կը կոչէ ի նորոյ, բաւական սրտայուզում
պատճառներ են Ալթէնի մէջ: Աւստիկ նմոյշ
մը այդ հեռագրերէն:

«Բանի մը կայսերական Իրաւներ ելան
այս օրերս: Առաջինը կը հրամայէ յիսուն վաշտ
զօրք շարժուն վիճակի մէջ դնել ի Փոքր-Ասիա.
երկրորդը կը հրաւիրէ Գ. զօրաւանակին (Մա-
կեդոնիա) հրամանատարը՝ տասը վաշտ զրկել
Էսթէմ փաշային. երրորդը կը պատուիրէ Գ.
զօրաւանակի (Հայաստան) հրամանատարին՝
քառասուն վաշտ զէնքի տակ կոչել. չորրոր-
դով հրահանգ կը տրուի նոյն հրամանատա-
րին՝ Համիտի քրիստ հեծելազուններ պատե-
րազմական վիճակի մէջ թողուլ. իսկ հինգե-
րորդը կը հրաւիրէ Թուրքիոյ բոլոր զինուորա-

ՅԱՎՈՐ ԱՍՏՈՒՐԵԱՆ

Փ Ա Ս Տ Ա Ր Ա Ն

Տիար Յ. Ասատուրեան, որ վերջերս արտօնուել զաւ փաստաբանէլ տեղական եւ խառն դատարաններու առջեւ, իր գրասենեակը հաստատուեալ է ի Գա. հիւրէ խմայիլի թաղին մէջ, Մազլում փառայի ապարանքին դիմաց, Սենդ-ձօրն պառի վրայ:

Բաց ի դատական գործերէ, յիշեալ գրասենեակին մէջ ձեռնարկեն, անգլիերէն, արաբերէն, հայերէն եւ քուրդերէն լեզուներով օրինական եւ ամեն տեսակ գրութիւններ կը բարգամանուին:

Յանախորդները գոհ պիտի մնան աշխատութեան եղանակէն եւ գիտելու չափաւորութենէն:

Ձեր խորհրդածութիւն՝ վկայեալ աղիւսներուն համար: 4-10

ՐԱՅՅԻԻ ԳՈՐԾԵՐԸ

Դիւրամասշտի պայմաններով

Ստանձնած ըլլալով Բաքիի երկաթուղիէն տարածուող Եգիպտոսի մէջ, չարաւուած գրքերէն ունիմ միշտ պատրաստ ծախուելու համար:

Սպասուածներէն՝ հետեւեալ երեք կտորներու տարագրութեանը ձեռնարկուած է Եգիպտոսի մէջ ամենաշքեղ կերպով:

ՍԱՄՈՒԷԼ. Ս. Բ. եւ Գ. հասոր
ԳԱԻԻԹ ԲԷԿԻ Ս. Բ. եւ Գ. վերջաբանով
ԿԱՅՅԵՐԻ Բ. հասորը լիակատար

Իւրաքանչիւր գիրք տասնձինն կտորէ 5 շիլինգ 25 դահեկան ուղի: Երբեք միասին 12 շիլինգ, 60 դահ. ուղի. ըստ տեսնելէ վերջ 1 անգղ. ոսկի:

ԲԱՅՎԱՍ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թէեւ ասկէ առաջ որոշեալ տեսն մ'ունէր, (մինչեւ սեպտ. 1) սակայն ե. հիմայ որովհետեւ տը. պագրութիւնը միայն յունուարի մէջ կատարուի, ի դիւրութիւն դեռ եւս չը բաժանորդագրուողներու, կը շարունակեմ տարածել ըստ անորդաթերթերը հետեւեալ կերպով:

Ինչպէս յիշեցինք, իւրաքանչիւր բաժանորդա. թերթ երեք գրքերու համար կտրմէ 12 շիլինգ, 60 դահեկան ուղի:

Այժմ մինչ տարագրութեան շրջանը կայ երեք ամիս, 12 շաբաթ. հսկող. 1 է սկսեալ, որով խա. բանչիւր բաժանորդագրուող անձ կը պարտի վճարել շաբաթը 1 շիլինգ, 5 դր. ուղի:

Անոնք որ աւելի ուշ կը բաժանորդագրուին, պէտք է վճարեն առաջին տոթիւ որոշեալ թուա. կան (հսկող. 1) է անցած օրերու շաբաթավճարը, զարմեալ օրին վերջացնելու համար: Իսկ այս պար. զապէս դիւրութիւն մ'է որ կընծայեմ միանուագ վճարելու անկարող անձանց համար, որոնք այս կերպով անգղապալէս պիտի ունենան վերոյիշեալ մեծանուն վիպասանին գործերը:

Բաժնիքի միւս երկերէն այլ շաբաթավճարով կա. րելի է վաճառուիլ փափաքողներուն:

Դիմել ի Գա. հիւրէ

Պապ-Էլ-Խալիլ. — սեղանաւոր տիար Ս. Միրան. եանի խանութը:

Օտար երկիրներէն՝ հետեւեալ հասցէին
M. Egavian 6-10
(Poste restante) Caire

ՀԱՄԱՐԱՄ

ԵՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՆԻՔ

ՀԱՆՄ ՓԱՇԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ. ՍԲԼԱՆՏԻՑ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՆԿՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՆԿՆԻՔԸ ԲԱՑ Է

Էրիկ մարդոց համար առաւօտեան ժամը 7էն 10 եւ իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:

Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ կէս օր:

Քրիստ եւ կիրակի օրերը միմիայն էրիկ մարդոց հա. մար:

Կիրակի եւ տոն օրերը Համմամը կէս օրէն վերջ գոց է:

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզրի



ՃԵՐՄԱԿԵՂԵՆ ԵԻՍՅՆ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՄԱՐ
Գ Ո Ր Ծ Ա Ծ Ե Յ Է Ք

ԼԷՍՍԻՎ ՏԻԻ ԺԵՆԻՆ

Մախի եւ ժամանակի խնայողու. րին. — Մաքուրեան կատարելագոր. ծուրին. — Արագուրին եւ դիւրութիւն. — ձեռնակե. դեմներու եւ այլոց հակամեխում:

ԿԱՐԵԻՈՐ. Լէսսիվ ՏԻԻ ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՅՆԵՐ


Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիւ. ս.ս.եկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի:

Միակ ներկայացուցիչ յեգիպտոս

Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Դանիւր. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 8-24

ԺԱՄԱՅՈՅՑԻ ՊԵՏՔ ՈՒՆԻՔ



Դիմեցէր ՍԵԼ.Վ.Ն.ՃԵՆԻՆ
Նորաշատատ մթերանոցն ի
համ հալիլ փողոց (Ոսկեր. չայ շուկան) ձեւմանի վեհա. լի մէջ: Սեղմանեան վաճա. ատուան որ Պողոց հրապա. րակի վրայ մեծ համարու մը կը վայելէր արդէն, իւր ապ. րանոց ընտրութեամբը ու գը. նոց անմրցելի ածանու թեամբը, վերջերս բոլորովին հոտ փոխադրուած ըլլալով Եգիպտոսի հասարակութիւնն եւս պիտի կրնայ մեծապէս օգտիլ այս տոթիւնէ:

Աւելորդ չենք համարիր փոքրիկ զապախար մը առլ մի բանի տեսակ ժամացոյցներու գնոց վրայ:

Նիքիլ, մէկ կողմն ապակի, կորեկ լարուղ 22 դե.ողջ

» » » » » ուրիշ մէկ

Նիքիլ, մէկ կողմն ապակի, կորեկ լարուղ ոսկե. սեսակը 40 դե.ողջ

Նիքիլ, երկու կողմն ապակի, կորեկ լարուղ 50 դե.ողջ

» » » » » ոսկեպա. 50 դե.ողջ

» » » » » ոսկեպա. 70 » »

» » » » » ոսկեպա. 80 դե.ողջ

» » » » » ոսկեպա. 75 » »

» » » » » ոսկեպա. 85 դե.ողջ

» » » » » ոսկեպա. 120 » »

» » » » » սարքեր մէկ

» » » » » սեսակ 150 դե.ողջ

Հիւ հաւաքածոց ամեն տեսակ ոսկի ժամացոյց. ներու թէ կնոջ եւ թէ արանց համար անմրցելի գնեցով:

Աստիճան զատ կը գտնուի նաեւ ամեն ճաշակի եւ ամեն քաակի յարմար արծաթ եւ նիքիլ ժամացոյց, չլիքայր, եւ գոհարեղէնք. ինչպէս նաեւ պատի եւ քոնսոլի ընտրական բանութիւններ:

Ամերիկեան ժամացոյց նիքիլ քոնսոլի եւ գրա. սեղանի յարմար:

Միմիայն 10 դուրուս ողջ որուն կանոնաւոր բանիլն երաշխաւորեալ է:

Ուրեմն դիմեցէր ուղղակի Սեղմանեան մթերա. նոցն ի համ հալիլ փողոց (Ոսկեր. չայ շուկան) ձե. վաճիր վեհալի մէջ:

Եգիպտոսի ամեն կողմէ եղած յանձնարարու. թիւնք փութով կը կատարուին: 4-12

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳՐՈՒՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	խառն 1,2,3,4	օմնիպ. 1,2,3,4	կէս ուղ. 1,2,3,4	օմնիպ. 1,2,3,4	էքսորէս 1, 2 4	օմնիպ. 1,2,3,4	էքսորէս 1, 2 4	օմնիպիւս 1 2 3 4	կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանիս	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
Տամանհուր	» 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Ալեքսանդրիա	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ալեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԳՐՈՒՅԻ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	օմնիպ. 1,2,3,4	կէս ուղ. 1,2,3,4	օմնիպ. 1,2,3,4	էքսորէս 1 2 4	խառն 1,2,3,4	օմնիպ. 1,2,3,4	էքսորէս 1 2 4	օմնիպիւս 1 2 3 4	կարգ
Ալեքսանդրիա	մեկ. —	7 30	7 15	9 —	9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	երեկ. 12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանիս	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Պէնհա	» 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Գահիրէ	» 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷՆ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՀԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
Թանիս	» 12 33	7 53	Խամաիլիա	» երեկոյ 1 20	7 5
Ջակադիկ	» 1 34	8 54	Ջակադիկ	» 3 7	8 53
Խամաիլիա	» 1 44	9 4	» 3 17	9 3	
Սիւէզ կայարան	» 3 40	1 —	Պէնհա	» 4 13	9 47
Տօք (քարափ)	» —	5 —	» 4 17	9 4	
			Գահիրէ	» 5 5	10 35